МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **22.11.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49, 24/97, 24/82, 24/130, 24/171»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի փետրվարի 29-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49», մայիսի 6-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/97», մայիսի 23-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82», հունիսի 18-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/130», իսկ հուլիսի 23-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/171» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ՝ Ընթացակարգեր): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգերին մասնակցության հայտեր են ներկայացվել նաև «ԹԵՔՆՈԼԱԲ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 02297912, այսուհետ՝ Ընկերություն):

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 4-րդ նիստի արձանագրության 7-րդ կետի համաձայն Ընկերությունն Ընթացակարգի հրավերի 9-րդ, 50-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/97» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ չափաբաժինների մասով, «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/130» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 7-րդ կետով՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ,

18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ չափաբաժինների մասով, «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/171» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 11-րդ կետով՝ 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոնշյալի արդյունքում ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է 2024 թվականի ապրիլի 29-ին կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49-4» ծածկագրով, հուլիսի 2-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/97-1», հուլիսի 12-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82-2», օգոստոսի 28-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/130-2», իսկ սեպտեմբերի 18-ին՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/171-4» ծածկագրերով պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագրեր):

Կնքված Պայմանագրերի 1.1 կետի համաձայն «վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար», 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»: Բացի այդ Ընկերության կողմից ԵՊՀ է ներկայացվել Պայմանագրերը չկատարելու և դրանք լուծելու մասին գրություն:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրը բոլոր չափաբաժինների մասով ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան

հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ